

«քննութեանց, խուզարկութեանց ճանապարհը՝ կ'ըսէ, բաց է ամէն մարդու, սակայն պէտք են այս խուզարկութիւնք ստուգիւ ուսումնական միայն ըլլալ, այսինքն ամէն ազգային համակրութեան եւ հակակրութեան զգածումներէ ազատ, որոնք՝ ինչպէս քաղաքագիտութեան համար վնասակար են՝ այսպէս եւ չարագոյն եւս են, պատմութեան համար, եւ քննադատին տղայամիտ ըլլալը կը ցուցնեն»:

Պր. Հաշտէուի քննած եւ իրարու հետ համեմատած անթիւ հին ու նոր յիշատակարանք՝ յորս այս հակակրութեան ոգին կը տիրէ, զինք համոզած պիտի ըլլան թէ այլ եւս անհնար է խնդիր ընել, ինչպէս երբեմն եղած էր, այն՝ Ռուսմանացոց ու Հայոց մէջ սերտ ու յարատեւ ներդաշնակութեան, այն՝ Հայոց Գանուբեան օրհանց վրայ անցուցած երջանիկ ու գոհ կենաց, որ անգամ մը միայն վրդովուեր է յիմարամիտ իշխանի մ՝ եւ իւր մոլեռանդն սիրականին ձեռքը, ատելութեան այն տկար ու անզոր մնացորդին նկատմամբ՝ զոր Ռուսմանացիք Հայոց դէմ՝ կրնան ունեցած ըլլալ եւ որ միայն անվնաս կատակներու եւ յատուկ բացատրութեանց վրայ կ'ամփոփուեր, եւն: Արդ այս համոզմանս մէջ միանգամ հաստատուելով՝ Պր. Հաշտէու՝ թերեւս սրտիցաւով՝ որ սակայն շուտով կը փարատի այն գոհութեամբ՝ զոր ամէն ուսումնագէտ կը զգայ ճշմարտութիւնն ամենայն հնարաւոր ճգամը գտնելով ու հրատարակելովը — երբեմն տուած վճիռը կը թողու եւ բացայայտ ու շատ պարզ կ'ըսէ:

«Ռուսմանացիք և ինչ որ էր Հայերը կամ կրօնական տարբերութեան, կամ անոնց կողմացեալ ու անջատեալ կենաց եւ կամ վերջապէս Յունացմէ ժառանգուած հակակրութեան մը պատճառաւ. » եւ քիչ մը վարը՝ «անգամ մը միայն ինչ, կ'ըսէ, որ Հայք՝ խոզմարտեան այս սորիւնութեան պարծառաւոր և անբարեկամ, եւ ինչ որ էր Հայերը կամ կրօնական տարբերութեան վկայութեամբ ալ հաստատելու համար՝ կը յիշատակէ 1551ին Ստեփան Ռարէշին հալածանքէն զատ՝ 1564ին Տեֆուզ Ադամի և 1671ին Տեֆուզ Այվոտային ժամանակն հանուածը. զորս երբեմն Ռուսմանացոց ու Հայոց մէջ տիրող ներդաշնակութեան իբր հաւաստիքը կը համարէր:

Ահաւաստիկ ուրեմն՝ նորին իսկ՝ այժմ՝ քաջահմուտ Պր. Հաշտէուի ինամօքն ու զօրեղ հեղինակութեամբը տապալեցաւ եւ ուղղուեցաւ

Ռուսմանիայի կրօնական հանդուրժողութեան պատմութեան մէջ Ռուսմանացոց Հայոց նկատմամբ ունեցած զգածման վրայ ծառած յօդուածին մէջ հրատարակած կարծիքը:

Առաջին եզրակացութենէն միակ կէտ մը միայն անխախտ մնաց նաեւ նորագոյն կամ գունեայ ցայս վայր ծանօթ խուզարկութիւններէն վերջն իսկ. եւ այս՝ Հայոց երկիր մը հաստատուելէն վերջ՝ այն երկրին նկատմամբ ունեցած զգածումին է, որ միշտ նոյն մնացած է, նաեւ երբ իրենք հալածանաց առարկայն եղած էին: Այս զգածումն՝ Պր. Հաշտէու միշտ նոյն ու անփոփոխ գտած է՝ ինչպէս կը խոստովանի իւր նոր ուսումնասիրութեան մէջ. «Գիտելի է, կ'ըսէ, որ Հայք՝ ուր որ կրցան հաստատուի՝ եղան բարի քաղաքացի ու հայրենակից, առանց սակայն իրենց նախնեաց լեզուն ու աւանդութիւնները կորսնցնելու»:

Ներուի մեզ մեր անձնական հեղինակութեամբ՝ միակ կէտի մը վրայ խնդիր մը յարուցանել եւ լուծել, ոչ թէ Պր. Հաշտէուի հակառակելու մտք՝ այլ անոր մէկ հաստատածն ըրացընելու դիտաւորութեամբ, վասն զի մենք անձնական շարժառիթներ ու ազբիւրներ ունինք զորս Պր. Հաշտէու չի կրնար ունենալ եւ հետեւաբար չէ կարող Ռուսմանիայի Հայոց այժմու վիճակը լաւ ծանշնալ. արդ ցայժմ՝ ըսուածին վրայ կ'աւելցընենք:

«Հայկական հնօրեայ գաղթականութեանց ներկայ սերնդեան նկատմամբ՝ ցանցառագէտ զարտուղութիւններն ի բաց առնելով՝ կը հաստատենք՝ թէ կորսնցուցած է իւր լեզուն եւ մասամբ եւս իւր նախնեաց աւանդութիւնքն իսկ, եւ պահած է միայն իւր հարց հաւատքը հանդերձ ծիսիւք եւ սովորութեամբը» — Այս՝ ճշդագոյն ու աւելի կատարեալ գնահատութիւն մ'է հինաւուրց գաղթականութեանց սերնդեան այժմեան վիճակին, որուն համար ոչ որ կրնայ պարծիլ կամ ամչնալ:

Տարաբախտ օրէնք մ'է այն՝ թէ միայն ատելութիւնն ու հալածանքը կը պահպանեն գեթութիւններն այն ազգաց մէջ՝ որ մի եւ նոյն երկիրը կը բնակին ու նոյն շահերն ունին, մինչդեռ միաբանութեան եւ հաշտութեան ոգւով միայն այս գեթութիւնք կը փարատին տակաւ յօդուտ տիրող ազգին:

Ռուսմանացոց՝ տգիտութեան խաւարէն ելլելէն՝ ու հայկական բովանդակ սերնդեան մը ճգանց շնորհիւ համոզուելէն վերջը՝ թէ երկու ազգացս մէջ տիրող զանազանութիւնը ոչ ու-